

**ՀԱՍՏԱՏՎԱԾ Է**  
 «Ինեկորբանկ» ՓԲԸ  
 2020 թ. մարտի 25-ի  
 հորհրդի նիստում  
 Արձանագրություն թիվ 240  
 հորհրդի Նախագահ

\_\_\_\_\_ Ա. Բալոյան

## «ԻՆԵՎՈՒՐԱՆԿ» ՓԲԸ ՇԱՀՈՒԹԱԲԱԺՆԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

### ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Անվանում	Էջ
1. Նպատակ	2
2. Կիրառման ոլորտ	2
3. Առնչվող փաստաթղթեր	2
4. Նկարագրություն	2
4.1 Ընդհանուր դրույթներ	2
4.2 Շահութաբաժնային քաղաքականության սկզբունքները	3
4.3 Շահութաբաժինների վճարման պայմանները	3
4.4 Շահութաբաժինների վճարման սահմանափակումները	3
4.5 Շահութաբաժինների վճարման մասին որոշումը	3

## **1 Նպատակ**

Շահութաբաժնային քաղաքականության նպատակն է՝ բաժնետերերի համար ապահովել իրենց ներդրման դիմաց համարժեք եկամտաբերություն: Բանկը դիտարկում է այս քաղաքականությունը որպես ֆունդամենտալ տարր, որն ուղղած է Բանկում երկարաժամկետ ներդրումներ իրականացնող բաժնետերերի բազա ստեղծելուն: Ելնելով վերոգրյալից այս քաղաքականությունը նպատակ ունի սահմանել այն բազային չափանիշները և սկզբունքները, որոնցով պետք է առաջնորդվի Բանկի խորհուրդը՝ բաժնետերերի ընդհանուր ժողովում շահութաբաժինների վճարման վերաբերյալ առաջարկություններ ներկայացնելիս:

## **2 Կիրառման ոլորտ**

Սույն քաղաքականությունը կիրառվում է Բանկի խորհրդի, բաժնետերերի և գործադիր մարմնի կողմից:

## **3 Օգտագործված փաստաթղթերի ցանկ**

- ❖ ISO 9001:2000
- ❖ ՀՀ օրենսդրություն
- ❖ ՀՀ ԿԲ իրավական ակտեր
- ❖ Բանկի ներքին իրավական ակտեր

## **4 Նկարագրություն**

### **4.1 Ընդհանուր դրույթներ**

4.1.1. Շահութաբաժնային քաղաքականությունը մշակված է համաձայն ՀՀ օրենսդրության, Բանկի կանոնադրության:

4.1.2. Բանկն իրավունք ունի որոշում ընդունելու (հայտարարելու) իր բաժնետերերի շահութաբաժինների վճարման մասին:

### **4.2 Շահութաբաժնային քաղաքականության սկզբունքները**

4.2.1 Բանկը պետք է պահպանի կապիտալի համարժեքության բավարար մակարդակ՝ ռազմավարական ծրագրով նախատեսված Բանկի զարգացումն ապահովելու համար,

4.2.2 Բանկը պետք է ապահովի բաժնետերերին մշտական և բավարար ծավալով վճարվող շահութաբաժիններ, բացառությամբ՝ սույն քաղաքականությամբ սահմանված դեպքերի:

4.2.3 Բանկը պետք է պահպանի օրենսդրությամբ, Բանկի ներքին իրավական ակտերով ինչպես նաև միջոցների ներգավման պայմանագրերով սահմանված պահանջները:

4.2.4 Բանկի խորհուրդի որոշմամբ կարող են սահմանվել լրացուցիչ նախապայմաններ և սահմանափակումներ:

4.2.5 Բանկի շահութաբաժինները վճարվում են ՀՀ դրամով:

4.2.6 Շահութաբաժիններն արտահայտվում են ընդհանուր գումարով և/կամ Բանկի հաշվետու տարվա զուտ շահույթի տոկոսային մասով և/կամ մեկ բաժնետոմսին ընկնող գումարով:

### **4.3 Շահութաբաժինների վճարման չափը և նախապայմանները**

4.3.1. Բանկի բաժնետերերին շահութաբաժինները վճարվում են չբաշխված շահույթից, որը հաշվարկվում է՝ օրենսդրությամբ սահմանված պահանջներին համապատասխան:

4.3.2 Որպես կանոն շահութաբաժինների չափը պետք է կազմի նախորդ ֆինանսական ժամանակաշրջանի արդյունքներով (\$ՀՄՍ համապատասխան պատրաստված ֆինանսական հաշվետվությունների) ստացված և արտաքին աուդիտորի կողմից ստուգված զուտ շահույթի առնվազն 40%-ը:

4.3.3. Բանկի բաժնետերերին շահութաբաժինների վճարման նախապայմաններն են՝

ա. Բանկում չբաշխված շահույթի առկայությունը,

բ. շահութաբաժինների վճարման՝ սույն քաղաքականության 4.4-րդ կետով նախատեսված սահմանափակումների բացակայությունը,

գ. Բանկի խորհրդի՝ շահութաբաժիններ վճարելու, դրանց չափի և վճարման կարգի մասին առաջարկություն պարունակող որոշման առկայությունը և,

դ. ֆինանսական ժամանակաշրջանի արդյունքներով առաջացած շահութաբաժինների վճարման (հայտարարման) մասին Ընդհանուր ժողովի որոշման առկայությունը:

4.3.4. Բանկի խորհուրդի որոշմամբ կարող է սահմանվել լրացուցիչ նախապայմաններ և սահմանափակումներ:

### **4.4 Շահութաբաժինների վճարման սահմանափակումները**

4.4.1. Բանկի շահութաբաժիններ բաշխելն արգելվում է, եթե այդ պահին Բանկի կրած կորուստները (վնասները) հավասար են կամ գերազանցում են Բանկում առկա չբաշխված զուտ շահույթի գումարը:

4.4.2. Բանկն իրավասու չէ կայացնել (հայտարարել) շահութաբաժիններ վճարելու մասին որոշում, եթե Բանկի խորհրդի կամ Ընդհանուր ժողովի որոշման ընդունման պահին առկա է կամ այդ որոշման կատարման արդյունքում կարող է առաջանալ ՀՀ կենտրոնական բանկի և Բանկի ներքին իրավական ակտերով սահմանված հիմնական տնտեսական նորմատիվները խախտելու հնարավորություն:

#### **4.5 Շահութաբաժինների վճարման մասին որոշումը**

4.5.1. Շահութաբաժինների վճարման և չափի մասին որոշումն ընդունում է Ընդհանուր ժողովը՝ խորհրդի առաջարկությամբ:

4.5.2. Շահութաբաժինների յուրաքանչյուր վճարման համար կազմվում է շահութաբաժիններ ստանալու իրավունք ունեցող բաժնետերերի ցուցակ, որում պետք է ընդգրկվեն Բանկի այն բաժնետերերը, որոնք ընդգրկվել են Բանկի բաժնետերերի ցուցակում՝ Բանկի տարեկան Ընդհանուր ժողովին մասնակցելու իրավունք ունեցող անձանց ցուցակը կազմելու օրվա դրությամբ:

#### **4.6 Կառավարման մարմինների միջև պարտականությունների տարանջատում**

4.6.1. Շահութաբաժնային քաղաքականության իրականացման նպատակով Բանկի կառավարման մարմինների դերերն ու պարտականությունները հետևյալն են:

##### **4.6.2 Բաժնետերերի Ընդհանուր ժողովը**

4.6.2.1 հաստատում է շահութաբաժինների վերաբերյալ փոփոխությունները բանկի կանոնադրությունում

4.6.2.2 հաստատում է շահութաբաժինների վճարումը, վճարման կարգը և դրանց չափի վերաբերյալ որոշումը

##### **4.6.3 Բանկի խորհուրդը**

4.6.3.1 հաստատում է Շահութաբաժնային քաղաքականությունը

4.6.3.2 Ընդհանուր ժողովի հաստատմանն է ներկայացնում շահութաբաժինների վճարման, վճարման կարգի և դրանց չափի վերաբերյալ որոշման նախագծերը

4.6.3.3 Կազմում է շահութաբաժիններ ստանալու իրավունք ունեցող բաժնետերերի ցուցակը